ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող տ.գ.թ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ագրոպարենային արտադրությունը հանդիսանում է Հայաստանի տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: 2007 թվականին ՀՆԱ-ի ծավալը ընթացիկ գներով կազմել է 3139353.9 մլն. դրամ, այդ թվում գյուղատնտեսության ծավալը կազմել է 547130.2 մլն. դրամ կամ ՀՆԱ-ում 17.5% (2006 թ.-ին 18.1%-ի դիմաց): 2007 թվականին ՀՆԱ-ի աճի տեմպը (13.7%) գերազանցել է գյուղատնտեսության աճի տեմպին (9.6%) [1]:

Աղյուսակ 1

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը

	2003	2004	2005	2006	2007
Համախառն ներքին արդյունք (մլն դրամ)	1624642.7	1907945.4	2242880.9	2657130.7	3139353.9
որից գյուղատնտեսություն	349180.1	430824.2	427255.9	480006.1	547130.2
Գյուղատնտեսության բաժինը համախառն ներքին արդյունքում, %	21.5	22.6	19.1	18.0	17.4

Հայաստանի գյուղատնտեսության տնտեսական աճը 2007 թվականին ապահովվել է 9.6%-ով, հիմնականում բուսաբուծության աճը՝ 12.3%, մինչդեռ անասնաբուծությանը՝ 4.3%: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 633.9 մլրդ. դրամ, այդ թվում բուսաբուծությունում՝ 429.9 մլրդ. դրամ, անասնաբուծությունում 204.0՝ մլրդ. դրամ[2]:

Հանրապետության գյուղատնտեսական արտադրությունում հիմնական հողօգտագործողները գյուղացիական տնտեսություններն են, տնօրինելով վարելահողերի 75.9%, բազմամյա տնկարկների՝ 74.4% , խոտհարքների՝ 44.9% :

Աղյուսակ 2

Գյուղատնտեսությունում համախառն արտադրանքն ըստ մարզերի / մլրդ. դրամ /

	2005		2006		2007	
	Համախառն արտադրանք	Տես. կշիռ %	Համախառն արտադրանք	Տես. կշիռ %	Համախառն արտադրանք	Տես. կշիռ %
Երևան	5.9	1.2	5.5	0.9	5.7	0.9
Արագածոտն	35.5	7.2	41.1	7.4	48.1	7.6
Արարատ	64.7	13.1	72.3	13.1	82.4	13.0
Արմավիր	74.9	15.2	83.5	15.0	96.4	15.2
Գեղարքունիք	69.5	14.1	80.0	14.4	90.0	14.2
Լոռի	51.8	10.6	58.4	10.5	64.0	10.1
Կոտայք	45.3	9.2	50.0	9.0	63.4	10.0
Շիրակ	49.3	10.0	56.7	10.2	63.4	10.0
Սյունիք	46.8	9.5	53.4	9.6	57.7	9.1
Վայոց Ձոր	22.2	4.5	24.4	4.4	27.3	4.3
Տավուշ	27.1	5.4	30.6	5.5	35.5	5.6
Ընդամենը	*493.0*	*100*	*555.9*	*100*	*633.9*	*100*

[1] Աղբյուրը՝ՀՀ ԱՎԾ-ի տվյալներ:
[2] Աղբյուրը՝նույնը:

Աղյուսակ 3

Գյուղատնտեսության ցանքային տարածությունների կառուցվածք ըստ մարզերի /%/

	Հացահատիկ	Տեխնիկական կուլտուրաներ	Կարտոֆիլ	Բանջարեղեն	Բոստանային կուլտուրաներ	Կերային կուլտուրաներ	Ընդամենը
Երևան	27.0	-	-	55.0	-	18.0	100.0
Արագածոտն	67.3	-	5.5	3.2	0.3	23.7	100.0
Արարատ	30.7	0.7	4.5	32.1	5.1	26.9	100.0
Արմավիր	25.8	0.2	0.4	26.9	14.8	27.9	100.0
Գեղարքունիք	58.6	-	21.7	2.9	-	16.8	100.0
Լոռի	43.3	-	14.1	4.3	-	38.3	100.0
Կոտայք	75.3	-	4.6	8.0	-	12.1	100.0
Շիրակ	75.5	-	5.7	2.8	-	16.0	100.0
Սյունիք	72.5	-	6.4	3.3	-	17.8	100.0
Վայոց Ձոր	52.9	-	5.9	14.7	-	26.5	100.0
Տավուշ	60.6	6.3	12.7	6.3	0.7	13.4	100.0
Ընդամենը	*57.6*	*0.8*	*10.4*	*8.3*	*1.9*	*21.2*	*100*

2007 թվականին հանրապետությունում կատարվել է 306.0 հազ. հա ցանք, նախորդ տարվա 310.2 հազ. հա-ի դիմաց: Պակաս է ցանվել 6.2 հազ. հա հացահատիկ (Արարատում՝ 2.1, Արմավիրում՝ 4.1), ավել է արտադրվել 240.0 հազ.տ հացահատիկ (Արագածոտնում՝ 30.1, Գեղարքունիքում՝ 79.5, Լոռիում՝ 14.9, Կոտայքում՝ 15.0, Սյունիքում՝ 32.9, Վայոց Ձորում՝ 1.1, Տավուշում՝ 11.9):

Պակաս է ցանվել 1.4 հազ.հա կարտոֆիլ (Լոռիում՝ 1.2, Տավուշում՝ 5.2), ավել է արտադրվել 44.4 հազ.տ (Արմավիրում՝ 3.1, Գեղարքունիքում՝ 11.3, Լոռիում՝ 13.5, Կոտայքում՝ 4.7, Սյունիքում՝ 3.9, Տավուշում՝ 9): Ավել է ցանվել 1.3 հազ.հա բանջարեղեն (Արարատում՝ 0.6, Արմավիրում՝ 0.4), ավել է արտադրվել 48.6 հազ.տ (Արագածոտն՝ 4.9, Գեղարքունիք՝ 5.0, Լոռի՝ 8.7, Կոտայք՝ 11.2, Տավուշ՝ 2.6): Ավել է ցանվել 1.9 հազ.հա բոստանային կուլտուրաներ (Արարատում՝ 0.3, Արմավիրում՝ 1.5), ավել է արտադրվել 71.4 հազ.տ (Արարատում՝ 8.9, Արագածոտնում՝ 3.8, Արմավիրում՝ 58.3):

Հացահատիկային մշակաբույսերի միջին բերքատվությունը ավելացել է 1.9 անգամ, կարտոֆիլինը՝ 13.1%-ով և բանջարեղենինը՝ 6.6%-ով: Խաղողի բերքը հիմնականում ավելացել է ինտենսիվ գործոնի հաշվին: Պտղի արտադրանքի պակասը անբարենպաստ տարվա հետևանք է:

2007 թվականին մթերվել և վերամշակվել է 216 հազ. տ պտուղ-բանջարեղեն և խաղող, որը գերազանցել է նախորդ տարվա մակարդակը 15.5%-ով: Այս տարվա մթերքներն աչքի են ընկել և՛ ծավալի աճով, և՛ տեսականու բազմազանությամբ, և՛ մթերող տնտեսությունների թվաքանակի աճով՝ 4 պտուղ-բանջարեղեն և 4 խաղող մթերող ընկերություններ:

Գյուղատնտեսական մթերքների իրացման հետ կապված կան խոչընդոտներ, որոնցից են.

- մեծածախ շուկաների բացակայությունը, որից օգտվում են վերավաճառողները՝ իրենք որոշելով մթերքի գինը՝ վնասելով գյուղացիական տնտեսությունների եկամուտներին,
- շուկաներից գյուղացիական տնտեսությունների հեռու լինելը,
- իրացնող կառույցների բացակայությունը,

• արտադրանքի փոխադրման համար պահանջվող ծախսերը:

Գյուղատնտեսությունում ավելանում է բուսաբուծության և անասնաբուծության համախառն արտադրանքը: Այս դրական կայուն միտումները հնարավոր են տեղական արտադրության հաշվին ավելացնելով համախառն բերքի մակարդակը, որի շնորհիվ կարելի է ապահովել ապրանքայնության մակարդակի բարձրացման և գյուղատնտեսական արտադրողականության աճի մակարդակը: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների ուսումնասիրվել է 2006-2007թթ. գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը մարզերի կտրվածքով[1]:

Աղյուսակ 4

ՀՀ-ի գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը մարզերի կտրվածքով /%/

Ապրանքայնության մակարդակը I 2006 II 2007		Հացահատիկ	Կարտոֆիլ	Բանջարեղեն	Բոստան	Ղառող	Խաղող	Միս	Կաթ	Ձու	Բուրդ
Ընդամենը	I	27.1	43.0	74.8	92.1	63.8	85.9	83.8	52.0	53.5	55.5
	II	24.2	45.5	76.9	93.8	48.7	85.3	83.0	53.3	52.2	57.5
Արագածոտն	I	27.2	45.1	73.1	69.4	56.7	69.5	82.2	48.3	58.2	49.2
	II	11.0	46.9	72.0	48.5	32.7	66.6	81.7	55.8	55.2	58.2
Արարատ	I	28.2	71.6	82.3	98.1	84.8	91.7	90.8	56.4	39.4	67.8
	II	17.2	77.1	82.7	95.2	79.9	89.3	91.5	64.9	37.1	72.8
Արմավիր	I	32.6	78.9	85.4	92.2	83.4	91.7	81.5	59.2	49.7	69.3
	II	34.1	84.1	90.5	94.7	90.8	92.6	89.8	58.6	52.5	-
Գեղարքունիք	I	45.3	45.6	44.7	-	51.0	-	73.7	61.4	88.8	65.3
	II	35.6	46.7	31.7	-	33.3	-	79.5	57.4	72.9	54.8
Լոռի	I	20.1	24.1	41.7	-	23.4	-	83.4	42.3	51.2	30.4
	II	13.2	26.3	52.3	-	19.7	-	85.0	48.7	53.4	34.5
Կոտայք	I	27.8	54.6	75.4	-	58.4	51.9	90.6	75.7	73.6	71.2
	II	35.1	52.4	71.9	-	78.8	51.9	89.0	70.4	72.4	75.4
Շիրակ	I	23.1	32.1	42.2	-	38.5	-	87.7	48.2	43.7	55.9
	II	26.6	33.5	39.2	-	18.7	-	88.1	48.3	45.7	57.4
Սյունիք	I	29.2	32.0	52.7	-	55.1	32.3	79.0	50.2	42.2	53.1
	II	34.7	37.9	52.4	-	54.3	28.8	82.6	48.8	45.9	58.3
Վայոց Ձոր	I	6.5	14.9	11.4	-	34.7	62.9	78.9	24.5	31.4	74.0
	II	8.0	14.0	12.5	-	25.3	87.4	77.0	21.6	29.2	73.7
Տավուշ	I	14.3	11.9	18.8	86.4	36.9	65.7	81.4	41.0	39.0	20.7
	II	10.7	14.7	18.8	-	14.6	58.0	79.7	41.0	37.9	23.9

Ըստ աղյուսակի տվյալների գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը բավականին ցածր է: Այն տատանվում է. հացահատիկ՝ 27%, միս՝ 83%, խաղող՝ 85%, բոստանային կուլտուրաներ՝ 93%-ի սահմաններում: Հանրապետության տարբեր մարզերի համար այն տարբեր է, քանի որ կախված է գյուղատնտեսական մթերքների արտադրության կառուցվածքից և իրացման պայմաններից: Հացահատիկային մշակաբույսերի ապրանքայնու-

[1] Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ-ի տվյալներ:

թյունը զգալիորեն բարձր է Արմավիրում (34.1%), Գեղարքունիքում (35.6%), Կոտայքում (35.1%), Սյունիքում (34.7%):

Ամենաբարձրը բոստանային կուլտուրաների մակարդակն է (93.8%), հատկապես, Արարատում՝ 95.2%, Արմավիրում՝ 94.7%:

Բարձր է նաև խաղողի ապրանքայնության մակարդակը (83.8%), ընդ որում Արմավիրում՝ 92.6%, Արարատում՝ 89.3%: Անասնապահական մթերքներից բարձր է կաթի, կաթնամթերքի մակարդակը. Կոտայքում՝ 70.4%, Արմավիրում՝ 64.9%, մսի ապրանքայանությունը ըստ մարզերի տատանվում է 77.0%-ից 91.5%: ՀՀ գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերության համակարգում խաղողի, պտղի, բանջարեղենի հիմնական մասը գնվում է գյուղատնտեսական հումք վերամշակող ընկերությունների կողմից: ՀՀ գյուղատնտեսության տարածքային զարգացումը պայմանավորված է տեղական արտադրության մշակման, վերամշակման, ներմուծվող արտադրանքի օգտագործման հետ, որով էլ կարևորվում է մարզերի զարգացման նշանակությունը և տարածքների տնտեսական զարգացման առանձնահատկությունները և ուղղությունները:

Ագրոպարենային համակարգի ոլորտում գոյություն ունեցող իրավիճակի վերլուծության և տնտեսական զարգացման գնահատման արդյունքում, կարևորելով վերամշակող արդյունաբերության հիմնական ենթաճյուղերի նշանակությունը, աղյուսակ 5-ում ներկայացնենք պահածոյացված արտադրանքի և խաղողի հումքով ոգելից խմիչքների արտադրության ծավալները[1]: Այս ծավալների ավելացումը սննդի վերամշակման այլ ճյուղերի զարգացման հետ միասին կօգնի գյուղատնտեսության տարածքների համաչափ զարգացմանը, քանի որ գյուղական հումք վերամշակող արդյունաբերության և գյուղական տարածքների միջև գոյություն ունի խիստ փոխկապակցվածություն:

Աղյուսակ 5

ՀՀ պտղի, բանջարեղենի և խաղողի վերամշակման ծավալները

Արտադրանքի անվանումը	Չափի միավոր	2005	2006	2007	2010
Պահածոներ ընդամենը	հազ. պայմ. տուփ	91920	104695	115500	179500
Այդ թվում՝					
բանջարեղեն	,,	43120	73300	84100	147500
պտուղ	,,	48800	31395	31400	32000
Խաղողի գինիներ	հազ. դալ	674.0	382.6	680.0	1900.0
Շամպայն գինիներ	,,	51.9	54.3	67.0	115.0
Կոնյակ	,,	913.5	905.6	915.0	942.0

Գյուղատնտեսական տարածաշրջանների արտադրական ներուժը գնահատելու և զարգացման ուղղությունները որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել.

- մարզի բնակլիմայական և տնտեսական առանձնահատկությունները և արտադրական մասնագիտացման ուղղությունները,
- տարածաշրջանների բնակչության պահանջմունքները պարենամթերքի տվյալ տեսակի նկատմամբ և սեփական արտադրանքով դրանց բավարարման մակարդակի բարձրացման, արտադրության ծավալների ավելացման, արտահանման հնարավորությունների մեծացման և ներմուծման նվազեցման անհրաժեշտությունը,
- մթերքների փոխադրելիությունը և պահեստավորման առանձնահատկությունները,
- մթերքի նկատմամբ պահանջարկը, առաջարկը և գները հանրապետության և միջազգային շուկայում:

[1] Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ-ի տվյալներ:

Հանրապետության մարզերի համաչափ զարգացման կարևոր չափանիշ է հանդիսանում նաև գյուղատնտեսության ոլորտում աշխատուժի օգտագործման մակարդակը, որը հիմք է հանդիսանում գյուղատնտեսության և ոչ նյութական արտադրության ոլորտների միջև զբաղվածության անհրաժեշտ համամասնությունների ապահովմանը: Ըստ ԱՎԾ-ի տվյալների գյուղացիական տնտեսությունների աշխատանքի արտադրողականությունը՝ համախառն արտադրանքի արժեքը մեկ մարդ ժամվա հաշվով, ըստ մարզերի 2005-2007թթ. միջինը կազմել է. Արագածոտնում՝ 551.2 դրամ մարդ/ժամ, Արարատում՝ 571.9, Արմավիրում՝ 547.2, Գեղարքունիքում՝ 527.8, Լոռիում՝ 436.9, Կոտայքում՝ 484.4, Շիրակում՝ 561.8, Սյունիքում՝ 513.2, Վայոց Ձորում՝ 402.2, Տավուշում՝ 405.1 և միջինը՝ 501.9 դրամ մարդ/ժամ: Հաշվի առնելով երկրի տնտեսական կառուցվածքում ագրարային ոլորտի կարևորությունը և մարզերի համաչափ զարգացման անհրաժեշտությունը, աշխատանքի արտադրողականության մակարդակը մարզերում բարձրացնելու համար անհրաժեշտ է պետական աջակցության ընդլայնում ծախսային առումով:

Արտադրության արդյունավետությունը ապահովում է բարձր եկամտաբերության և շահութաբերության մակարդակ, որը արագ ձևով հատուցում է տնտեսությունում կատարված ծախսերը:

Շուկայական տնտեսությանն անցնելու գործում կարևոր նշանակություն ունի արտաքին տնտեսական ռեսուրսների և մասնավոր ներդրումների ներգրավումը և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը հիմնական տեղական ձեռնարկատիրական գործունեության խրախուսմանը առաջավոր տեխնոլոգիայի կիրառման մեջ: Գործարարության զարգացման տեսանկյունից բավական մեծ դեր ունի մարզային համաչափ զարգացումը, որը պարենային ապահովության կարևոր նախապայմաններից է: Հանրապետության և նրա մարզերի կայուն և հուսալի զարգացման, հատկապես տնտեսական, մակարդակների միջև առաջացած անհամաչափությունների հետևողական հաղթահարման համար անհրաժեշտ է.

- թույլ զարգացած մարզերի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,
- մասնավոր հատվածի համար առավել բարենպաստ պայմանների ստեղծում,
- սահմանամերձ գոտու բնակավայրերի ամրապնդում,
- լեռնային բարձր բնակավայրերի և թույլ յուրացված տարածքների զարգացում,
- մարզերի տնտեսական զարգացման պետական աջակցություն, արդյունավետության բարձրացում:

Տարածքային զարգացման առումով հանրապետությունում ստեղծված և կանխատեսվող գյուղատնտեսական տարածքների համաչափ զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք արդյունավետ ազդեցություն կունենան բնակչության կյանքի, ապրելակերպի մակարդակի բարձրացման գործում: